

ՀԱՅՈՒԹԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Н. Марръ. Изъ Поездки на Аеонъ.—^{6.}
Մառ. Արտօնի ճամապահողութիւնից. ^{7.} Ն. Նիկողայոս
Մառը. Պետերբուրգի համալսարանի արևելեան
լեզուների երիտասարդ ուսուցավետներից մէկը,
երաւամբ այսօր մէծ յարդանք է վայելում հա-
յակէների փոքրիկ շշանի մէջ: Նա յայտնի է
իւր բազմաթիւ մանր բայց վերին աստիճանի
լուրջ ուսումնասիրութիւններով: Աչքի առաջ
ունենալով նորա ջոննաբերութիւնն* ու զիտական
լրջութիւնը, մէծ ակնկալութեամբ ենք սպա-
սում մագիստրոսական շաբագրութեան հրատարա-
կութեան, որ արգէն մասնութիւն տակ է: Ներկա-
յիւս կամննում ենք մէր ընթերցողներին հա-
մառօտ անդեկութիւն տալ վերոյշշեալ անտ-
րակի մասին, որ մէ համառօտ զեկուցումն է
Աթոս լեռնի վերայ կատարած այն ու-
սումնական ճանապարհորդութեան, որ անցեալ
ամառ մի խուզմբ գիտականներ, ի թիւս որոց
և յարգելի հեղինակը, ձեռնարկել էին զիտու-
թեան ճեմարանի օֆանդակութեամբ և Կոնդա-
կովի առաջնորդութեամբ: ^{8.} Պ. Մառը իւր այս
աետրակով վերին աստիճանի հետաքրքրական մի
հարց է կամննում պարզել, Վորոց, Հայոց և
Վրաց մատենագրութեան առնչութիւնը: Տետ-
րակի երեք հատուածներից ամենակարևորը մեզ
համար վերջինն է, ուր հեղինակը փաստերով
ապացուցանում է, որ Վրաց մատենագրութիւ-
նը կախումն է ունեցել Հայոց մատենագրու-
թիւնից: Կայ իսկ այսօր վկայաբանութիւններ

Ապրիլ 1898 թ. ընթացքում պ. Պառը
հետևեալ յօդուածներն է հրատարակել:

1) Къ критикѣ Монсея Хоренскаго. „Ви-
зантійскій Временникъ“ գիտական թերթում:

2) Ани, столица Армении (Братская по-
мощь) ժողովածուի մէջ երկ. հրատ. 1898

3) Этимологія двухъ терминовъ армянска-
го феодального строя. Записки Вост. Отд.

4) О предполагаемомъ коренному родствѣ
трехъ армянскихъ словъ (*անդ.*)

5) Спорный Терминъ древнеармянского
эпоса (*անդ.*)

6) Грузинскій поэтъ Акакій объ армянахъ
(Новое Обозрѣніе)

7) Виѣсто Отвѣта публицисту поэту. Но-
вое Время.

9) Պամուլի տակ է Ա. «Վարդանի առակ-
ներ» I. և Բ. „Къ Грузинской агиографіи по ру-
кописямъ Ивера“

10) Ներկայ աետրակը՝ Изъ Поездки на
Аеонъ.

կան մնացած վրացերէնու որ ակնյայտնի կերպով
թարգմանուած են հայերէնից: Այս մատենա-
գրական առնչութեան լուսաբանութիւնը ունի
և ընդհանութեան նշանակութիւն, որոշելու Հայոց և
Վրաց քաղաքակրթական յարաքերութիւնը: Շատ
գժուար է պարզել այս խնդիրը՝ մանաւանդ
այն պատճառով, որ Հայոց և Վրաց նախնի
յարաքերութիւնները խճողուած են աւանդու-
թիւններով, որ գեռ ևս զիտութեան բավից
չեն անցել, իսկ ևկեղեցական բաժանմամբ և
թշնամական յարաքերութեամբ խփուած են նաև
զրական առնչութիւնները: Յամենայն գէպս
Հայոց քաղաքակրթական և մատենագրական
ազգեցութիւնը պէտք է Խ-Բ., զարերին վերա-
գրել, որովհետեւ Թ-Ձ զարերում արգէն վրա-
ցիք իրենց համար մատենագրական գործունեու-
թեան նոր կեդրաններ էին հիմնել, որ զարգա-
նում է և թարգմանական զրականութիւնը,
գլխաւորապէս յունարէնից: Այս զարերում հա-
յերէնից թարգմանուած է միայն Եպիփան կիոլ-
րացաւ սազմոսաց մեկնութիւնը. թարգմանիքը
մեղք է համարում, որ նա հայերէնից է թարգ-
մաննել, ուստի և ներողութիւն է խնդրում բն-
թերցողներից: Այս թշնամական յարաքերութիւ-
նը իւր ազգեցութիւնն է ունեցել և նախինն
թարգմանութիւնների վերայ. յետազայ սերուն-
դը աշխատել է հայերէնից եղած թարգմանու-
թիւնները հետզետէ յետս մղել՝ ոչնչացնելով
կամ մաքրելով հայկարանութիւններից և կամ
փոխարինելով յունարէնից կատարուած նոր
թարգմանութիւններով: Հասկանալի է, որ պա-
պիսի հանդամանների մէջ իւրաքանչչիւր յիշա-
տակարան, առանց ի նկատի ունենալու բովան-
դակութիւնը, թանգագին նշանակութիւն ունի
Հայոց և Վրաց քաղաքակրթական յարաքերու-
թիւնը որոշելու համար:

Հայոց քաղաքակրթական ազգեցութիւն
առաջին մէծ լիշտակարանը Վրաց ո. Գիլքն է,
որ հայերէնից է թարգմանուած: Այս իրողու-
թիւնը անկարելի է հաստատել բառ առ բառ
համեմատութեամբ. որովհետեւ թէ Հայոց և թէ
Վրաց նախնի թարգմանութիւնները փոփոխու-
թեան են ենթարկուել: Հայոց Ս. Գիլքը թարգ-
մանուած է նախ ասորերէնից և ասա ուղղուած
է յունարէնի վերայ. այսպէս էլ վրացիք հայերէ-
նից կատարած նախինն թարգմանութիւնը ուղղել
են յունարէնով: Ուստի Վրաց Ս. Գրքի կախման
հարցը այսպէս պէտք է մասնաւորել, թէ ար-
գեօք նորա մէջ հայերէնից թարգմանելու նշան-
ներ կան, թէ ոչ: Հեղինակը մի շաբթ փաստե-
րով՝ յատուկ անունների հայերէն ձևերը, հայերէն
բազմաթիւ բառերի և ոների գործածութիւնը,
որ առնուած է հայերէն ընագրից—ապացուցա-

նում է Ա. քաց Ս. Գրքի կախումը հայերէնից; Բնակունաբար այս առնչութիւնը պէտք է ամենավաղ ժամանակներին վերագրել, որպէս հետևած անկարելի էր, որ վրացիք յետին դարձրում: Հայերից բաժանուելուց յետոյց իրենց Ս. Գրքը հայերէնով սրբագրելին: Ցարդելի զիանականը Ըմբուռմ համեմատել է 978 թ. գրուած հին կամկարանի մի քանի, Եզրի, Հոռոթի, Նեէմի, Ցոլնանի գրքերը, որից պարզ վիրական թարգմանութեան կախումն է Երևում հայերէնից, 913 թ. գրուած՝ չորս առեւտարանների վրացերէն ամենահին ձեռագրի համեմատութիւնն ևս նոյն իրոզութիւնն է հաստատել, որ հարազատ թարգմանութիւնն է հայերէնից, նոյն բաժանութերով և պակասներով, ինչպէս յատուկ է Հայոց հին ձեռագրիներին: Այս ձեռագրի մէջ ես պակասում են շնորհեալ կոչ պատմութիւնը (Յովհ. 1: 53—Ը. 11) և Պարկոսի վերջը Ժ. 9—20.: Բայց նոյն իսկ այս հին ձեռագրին էլ առանց որբագրութեան չէ մնացել. մի քանի որբագրութիւններ զեռ ես ընազրի մէջ չ չեն մտած, այլ նոյն բառերի վերայ են գրուած. օր. Պատթ. Ժ. 24 յունարէն տաղանդ բառը գրուած է տողի վերև իրեւ որբագրութիւն Հայոց բնագրեց առնուած յանձար բառի, իսկ հայերէնն առնուած է ասսրերէն յարայ բառից:

Ա. քաց գրականութեան կախումը հայերէնից շատ աւելի պարզ երևում է հեղինակի գտած վրացերէն այն 14 վկայաբանութիւններից, որ թարգմանուած են հայերէնից: Նոյնից 11 վկաները Հայոց եկեղեցու որբեր են, որոնց վկայաբանութիւնը կայ նաև հայերէն, իսկ մէկը՝ Գէորգ գօրավարը. թէ՛ յունաց մարտիրոս, բայց վրացերէնում պահուած գորավար մականունը հաստատուն ապացոյց է, որ հայերէնից է թարգմանուած, չհաշուելով հայերէնի թողածութիւն պայեցութիւնները:

Այդ վկայաբանութիւնները հետեւալիներն են՝ Առաջին՝ վկայութիւն որբոյն Սանգիստոյ, որ (Սովերը Ը.) հայերէնի ճիշտ թարգմանութիւնն է: Երկրորդ՝ վկայաբանութիւն որբոյն Ասկեանց քահանացիցն. (Սովերը հայկականը Ժ. 1:)

Երրորդ՝ վկայաբանութիւն որբոյն Սովետանց (Սովի. Ժ. 1:), Մատենագրատկան առանձին նշանակութիւն ունի այս վկայաբանութիւնը նույնով, որ կապ ունի Մամիկոն Խորենացու պատմութեան հետ: Այս վկայաբանութիւնը գտնըւում է Ժ. գարու մի ձեռագրի մէջ և կարող է թարգմանութեան լինել ոչ ուշ քանի է. դարու վերջերը կամ Ը. կ. սկզբները: Ը. գարու կիսերին սկսուում է Հայոց և Քիլաննալացոց եկեղեցների մէծ թշնամութիւնը, որին պէտք է մասնակցէն և Արացիք, Աւրեմն գժուար է Ենթագրել, որ Վրացիք Ը. գարի կէսերից յետոյ

թարգմանած և ընդունած լինէին զուտ հայկական վկայաբանութիւններ, Կոկ արդ Խորենացու ներկայ քննադատաները կամենում են նորա պատմութեան ծագման ժամանակը մէջն թ. դարու սկզբներն իջեցնել և հեղինակի շինածն Են համապում այդ գրքի առասպեկները, ի մէջի ալոց և Սաթենինի տիկնոջ պատմութիւնը: Այս վկայաբանութիւնը հաստատում է, որ կամ Խորենացին չէ Սաթենինի պատմութիւնը հաստատում է, որ կամ Խորենացին չէ Սաթենինի պատմութիւնը այդ պատմութիւնը անշարժ, այլ օգտուել է այս վկայաբանութիւնից, իսկ եթէ համարական ընդունելով, որի արք է ասեւը, որ Խորենացին զբիւ է ամենուու շը և. գարու կէսերում:

Երրորդ՝ Ա. ուստուքի որդոց և թոռանց վկայաբանութիւնը, որ նման չէ ոչ Սովերիքի (Ժ.) մէջ հրատարակուած վկայաբանութեան և ոչ Ագաթանգեղոսին: Սակայն այս վկայաբանութեան մէջ եղած հայկաբանութիւնները ապացոյց են, որ հայերէն ընազրից է թարգմանուած, մինչև այժմ տարաբազմաբար գեռ ես անցայու: Խորենացին օգտուել է այս վկայաբանութիւնից, իսկ եթէ համարական ընդունելով, որի արք է ասեւը, որ Խորենացին զբիւ է ամենուու շը և. գարու կէսերում:

Հինգերորդ՝ Ներսէս մեծի վկայաբանութիւնն է, որ Խորենացու համար նոյն տեսուկ նշանակութիւն ունի, ինչպէս չընչպէս չըրսորդը:

Վեցերորդ՝ Սահակ Պարթևի վկայաբանութիւնը, որից կատարել է, հեղինակի կարծիքով Պատգամ Փարպեցին: Պ. Մասք խոստանում է զրել այս խնդիր առթիւ:

Եղիսերորդ՝ վկայութիւնն որբոյն Աստմայ և որգոյ իւրում . . . (Սովերը Ժ. 1:.) որ հայերէնի հարազատ թարգմանութիւնն է:

Ուրենորդ՝ Վարդանի, նորա եղբօր Հմայեակի, Վահանի, Սահակի և 137 վկաների նահատակութիւնը, որ կապ ունի Եղիշէի և. յեղանակի հետ, Այս վկայաբանութեան ընազրից մինչև այժմ չէ գտնուած, Եղիշէ պէտք է այդ վկայաբանութիւնից օգտուած լինի, որովհետեւ և. յեղանակի յառաջարանը այս վկայաբանութեան խօսքերով է սկսուում:

Իններորդ՝ Վարդանի գտներ Շուշանիկի վկայաբանութիւնն է, որ թարգմանութիւնն է հայերէն համառու խմբագրութեան: Թարգմանիչը ամենայն հաւատաբար թեամբ հետեւում է իւր ընազրին և մինչև իսկ պահել է Հայոց Ամաւագ բառը:

Տասմենորդ՝ Պաւելթ Պաւենցու վկայաբանութիւնը, (Սովի. Ժ. 1:), որ քրիստոնէութիւն է ընդունել Անաստաս կաթողիկոսի (661—667) ժամանակ և նահատակուել է 693 թ. Սահակ

Զորակիորեցու օրով: Գութի վկայաբանութիւնը Աթոսի ժողովածուի մէջ, որից հանել է հեղինակը իւր նիւթերը, վերջններց մէկն է. գուցէ այս թուականը թարգմանութիւնների վերջնն ուահմանը մնի:

Տամ և մէկիւրդ՝ Գութի և Տեղայական եղայինների վկայաբանութիւնն է, որի հայերէն բնագիրը գեռ ևս յայտնի չէ:*

Բայց սոցանից պ. Մառը յիշում է երեք ուրիշ վկայաբանութիւններ, որոնց հերոսները, թէեւ Հայոց եկեղեցու որբեր չեն, բայց թարգմանուած են հայերէնից: Կատաձելի կարող է մնել միայն մէկը, — Վկայաբանութիւն սրբուհոյն Գորանիվատոյ:

Եյս վկայաբանութիւնը կրնատ խմբագրութեամբ հրատարակուած է և յունարէն, Բազմաթիւ հայերէն բառեր կան դործածուած այս վկայաբանութեամն մէջ, ինչպէս զանդի, մշնարիսի, վանի, տոնի, բառականի, աւարի, համբորի (համբոյ), վիշապի, մենակապանի, ուակայն այս բառերը քաղաքացիութիւն են սոտացած Արաց լեզուի մէջ, ուստի և գտնւար է թարգմանութեան վերադրել: Մենացած երկու վկայաբանութիւնների մասին հասատութեամբ կարելի է պնդել, թէ հայերէնից են թարգմանուած, մէկը Դէորդ զօյավարի վկայաբանութիւնն է, որի մասին յիշեցինք արգէն, միւսը Յեղիքուղիքի, որից ասորերէն միւայն մի քանի տող է մնացած: Արացերէնը հայերէնի բառացի թարգմանութիւնն է, ժ. դաշտում Արաց Նըսենիոս պատրիարքը յիշում է այս վկայաբանութիւնը:

Տետրակի վերջում հեղինակը խոստանում է աւելի մանրամասնութիւններ տալ երբ Աթոս լերան վերայ հաւաքած նիւթերը կհրատարակէ: Ներկայ զեկուցման նպատակն էր յիշեալ փառաւով ջրել Հայոց և Արաց նախկին մատենադրութեան յարաբերութեան զէմ եղած կարծիքները և ապացուցանել, որ արդարե Արացիք եղել են Հայոց քաղաքակրթական ազգեցութեան տակ, որով և պէտք է բացատրել յիշեալ թարգմանութիւնների պատճառը:

Լոյս է տեսել մեր պաշտօնակից և բարեկամ ար. Մ. Աբեղենանցի գրասորական շարադրութիւնը—Der armenische Volksgläubige, Leipzig, 1899—Հայոց ժողովրդական հաւաքը—վերնագրով: Ժողովրդականն ըանահիւսութեան, առասպելների ուսումնասիրութեան համար մի գեղեցիկ գործ, որի մասին հետեւալ համարում կիսունենք:

Դ. Ա. Յովսէփինան.

* Պ. Մառը այժմ պիտի է զած լինի և հայերէնը. մի մասնաւոր նախակով հապրդէլ էր մեզ նոյն վկայաբանութեան պառամաճը: Մեր մատնադրամի Յայսմաւուրների մէջ անկարելի եղաւ զնել այս վկայաբանութիւնը:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ.Բ

Բուղայի նուիրական ատամը. — Ուսուցչապետ Ա. երենէրն իր ճանապարհորդական նկարագրութեանց մէջ, ի միջի այլոց, հաղորդումէ, որ բուղայականների այդ գարաւոր սրբութիւնն այժմ Ցէլյօն կզզու Կանդի քաղաքի հոյակալ տաճարներից մէկն է պահուում և թէ վերջին ժամանակներս, երբ Սիամի թագաւորն այդ քաղաքումն էր գտնւում, ի հանգէս էր զրուած: Ըստ հետաքրքիր է այդ ատամի պատմութիւնը: Երբ 1560 թուրի Փորթուգալացիները տիրեցին Պշավանագարին, Բուղդայի այդ իրը թէ իսկական համարուած ատամը նրանց ձեռքն ընկաւ և վերջը տարուեցաւ Գուռ քաղաքը: Եւ թէեւ Հնդկաստանի Պեգու Նահանգի թագաւորն 400.000 սակի առաջարկեց քրիստոնեաներին, սակայն ի զուրի Ռոյի արքեպիսկոպոսը վճռել էր մի անգամ ընդ միշտ ոչնչացնել հեթանոսների սնուտիապաշտութեան այդ ատարկան: Փոխարքայի և նրա դրանիկների ներկայութեամբ եպիսկոպոսն ինըն իր ձեռքով ծեծեց սանդի մէջ Բուղդայի կարծեցեալ ատամը, ստացուած փոշին այրեց կրակարանում: Խոկ մոիիին ամրոջապին ծովը լցրեց: Ասկայն չանցաւ մի քանի տարի և ահա բուղդայականների մէջ լուր տարածուեցաւ, թէ Բուղդայի ատամը Ցէլյոնումն է գտնւում և կատարուած հրաշքի չնորհիւ բուղդայականներն առաջուանից էլ աւելի սկսեցին յարդել ու պաշտել:

Ականատեսի մէկը վկայում է, որ այդ ատամը փղոսկրի մի սրած կտոր է, որի երկարութիւնը երկու իսկ հաստութիւնը մօտաւորապէս մի վերշոնէ է.

* *

Զիմական պարգևն. — Զիմաստանի այրի կայսրութիւն Տզա—Տչի իշխանին երկրորդ, իսկ Տզա—Լիենու իշխանին երրորդ կարգի մի մի պատուաւոր սուր է ընծայել, իրեւ առանձին պարզեց և իւր բարեհաճ ողորմածութեան շնորհ:

Ա. յ. տեսակի սրերն «Հանգ—ֆանգ» են կոչւում: Ալ այդպիսի սուր կրելու պատուին է արժանանում: Նա միենցն ժամանակ իրաւունք է ստանում զիմաստելու ոճրագործներին, առանց բարձրագոյն թոյլտութիւն ձեռք բերելու և կամ ուշացարութիւն դարձնելու յանցաւորի ծագման ու նրա տերութեան մէջ բռնած դիրքին:

«Հանգ—ֆանգ» սրերի իրաւունքի հաստատութիւնը խորին հնութեան մէջ է թաղուած, երբ բարձրագոյն պաշտօնեաներին, որոնք իրենց